ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 222-Ա **25 ապրիլի 2025 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 193-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ - անվտանգության և վերահսկողության տնօրենի 2024 թվականի մարտի 18-ի N Ե-495-24 և Ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի 2025 թվականի ապրիլի 18-ի N 49/14/103532-25 գրությունները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի մայիսի 18-ի «Քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային ծառայությունների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի մարտի 6-ի N 8 – Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 193-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

25.04.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2025 թվականի ապրիլի 25 - ի
N 222-Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2020 թվականի մայիսի 18 - ի
N 193 - Ա որոշման

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐ

Հասարակական կարգի պահպանման ծառայության պետ - Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Գավառի բաժնի պետ /համաձայնությամբ/

Էներգետիկայի ծառայության պետ - «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Գեղամա» մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ, /համաձայնությամբ/

Նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետ - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Ինժեներական ծառայության պետ - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Բժշկական ծառայության պետ - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Առևտրի և սննդի ծառայության պետ պետ - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ

Մամիկոն Գալոյան - **կապի ծառայության պետ,** - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Գագիկ Խանդանյան - **բնակչության հատուկ սպասարկումների ծառայության պետ**, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Գևորգ Խաչատրյան - **տրանսպորտային ծառայության պետ**, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Հակոբջան Բիձյան - **կոմունալ տեխնիկական ծառայության պետ**, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-04-25 10:09:42 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ